Անահտ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Թ. ՏԱՐԻ 1907 — ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ — Թիւ 3-4-5

Նարեկացւոյ վերագրուած ՏԱՂԵՐԸ

ն խումբ մը տաղերը որոնք Վենետիկի Մխիթարեանց «Մատենադրութիւնք Գրիգոր Նարեկացւոյ» հատորին մէջ մտած են իբր գործ Նարեկացւոյ, ոչի եւ լսուի այնպիսի խոշոր տարբերութիւններ կը ներկայացնեն Նարեկացւոյն բուն գործերուն հետ, որ ինծի շատ դժուար կը թուի(1) զանոնք վերագրել Նարեկացւոյն (եւ այս նկատողութիւնը միայն ոչ միայն այն տաղերուն համար որ կը գտնուին Վենետիկ լոյս տեսած հատորին մէջ, այլ եւ անոնց որ Բագտավիկին մէջ կամ այլուր տրպուած են իբր գործ Նարեկացւոյ։)

Նախ՝ այդ տաղերը իրենք իրենց մէջ ունին ներշնչման ու մանաւանդ լեզուի ու ոճի ահագին տարբերութիւններ, եւ չեն կրնար միեւնոյն հեղինակին գործն ըլլալ։ Առէք, օրինակի համար, Վենետիկի հատորին չորրորդ տաղը.

Գունդը սուրբ վկայիցն ի սոսկալի պատերազմին,
Շանդիսաւորեալ հասին ի գլուխ ասպարիսին, եւն.

Կարդացէք՝ անմիջապէս յետոյ՝ վեցերորդ տաղը.

Ի նոյն նորոյ նորին ը նոյն ը նիւթ,
Նիւթէական էն յանէից գոյ, եւն.

կամ տասներկուերորդը.

Էն էին անէին եղանի եղակ եղելի՝
Անեղկին անեղբից յաւիտեանս
Անհաս իմանի անկէտ այժմուս հասու.

Տարբերութիւնը բացարձակ է, մին ազնիւ հայերէն, ներդաշնակ ու կատարեալ սճ, հանդարտ ու պայծառ ներշնչում. միւս երկու կը-տորները (որոնց նման դեռ ուրիշներ ալ կան՝ շարքին մէջ) օտարախորթ անճաշակ հայերէն, նրբամոլ բառախաղական հոհատորութիւն՝ մերթ սիրուն գիւտերով։ Իսկ կան ալ կտորներ, որ

Որ մրժեզ ու մրրիւն չէին գրաներ անց։
Այսպէս չարունակեց մինչ իրիկուան մուռ
Եւ զիշերն ըղձացաւ իւր վերարկուն մութ։
Հաւաքեց Արտաշիր զօրքը ցիր ու ցան,
Մի մեծ լիճ կար հոնուն ուր բանակեցան։
Երբ դիպուկ ժանգաւ-բանգ(1) եղաւ համակ սեաւ,
Ցայգապանք երիւտեանք շրջէին կարգաւ,
Շահին զօրաց հատաւ ուտեստի պաչար.
Կապած էր անօրէնն ամէն ճանապարհ։
Ջանրումի մէջ մէկ մարդ կար վատազգի չատ,
Որոյ անուն Մեհրակ էր Անուշազատ։
Երբ իմացաւ նա չուն Շահ-Արտաշիրի
Եւ նորա նրհանջելն առ ափրն ջրրի
Եւ համարի սպառելն ի մէջ բանակի,
Եւ անցքերու կապուիլն ալ չուրջանակի
Հոյացաւ պաշարել պալատը Շահին,
Ժողվելով զօրք անթիւ ի ճանապարհին.
Աւարեց գանձը, բան չը թողուց իսկի,
Զօրաց բաշխեց թագեր՝ քրսակներ ոսկի։
Երբ իմացաւ արքայն Արտաշիր զաղէտ
Այն լրճափին՝ ուր էր, սրբամեցաւ յաւէտ.
«Իմ սեպհական, ասէր, տուն չը յարդարած,
Օտարին ինչո՞ւ ես եղայ կրռուամած».
Վրդուրկ հրամայուներն ուղեց իւր ատեան,
Մեհրակէն նոցա չատ եղաւ ամբաստան։
«Ի՞նչ կը խորհիք, ասաց, դուք, ո՛վ զօրավարք,
Որ այսպէս դաւն ելին մեզ այս պատահարք։
Կեանքի գառնութեան չատ առած էի համ,
Բայց չը կար այս Մեհրակ հաչուի մէջ անգամ»
Զայն բարձին յայնժամ պեռք, ասեն. Տէր Արքայ,
Քո աչեր չը տեսանն բընաւ թէ չար գայ։
Թէ մի Մեհրակ ի գաղտ թըշնամի է քեզ,
Ինչու՞ խաւար կուգայ քեզ աչխարհ այսպէս։
Հրկոր ու մեծ ես դու, աչխարհ քեզ հրլու,
Մեք քո ծառայք, ահա՛, պատրաստ մեռնելու։

Թարգմ. Տր. Ց. ԹԻՐԵԱՔԵԱՆ

(Շարունակելի)

(1) Ժանգաւի գոյն. երկինքը կ՚ակնարկէ։

ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ(1)

Ժողովրդական երգերի ծաւալումը եւ ազդեցութիւնը

Դիպակաց գպրոցի գերք Գէորգ Գ. եւ Մաքար Ա. կաթուղիկոսների օրով. — կար ժամանակ, երբ գեղջուկ եղանակները գին չունէին։ Անցեալ դարու կրթուած մարդիկն անգամ գրում ու տարածում էին, թէ հայ գիւղացին բանաստեղծութիւն ու երգ չունի։ Այս կարծիքն արագ քնդնանարացաւ, որովհետեւ չինականի համար իր առօրեայ ստեղծագործութիւնն արժէք չունի. հաց ու ջրի պէս մի ակամայ պահանջ է։ Գիւղացին իր երգերի չատ տեսակն արհամարհում է. ծիծաղում է ուսում առածների վերայ, որ խնամքով գրի են առնում եւ ժողովում են այդ «ճեռաք բաներն ու աղջկայ խաղերը։»

Ժողովրդական եղանակների տարածման մեծ զարկ տուին նախկին ծխական դպրոցների երգեցողութեան ուսուցիչները, որոնք սնուցին մատաղ սրտերն ու մանուկ զգացումները պարզ ու գողտրիկ, բուն գեղջուկ երգերով։ Այդ դպրոցներում սովորող անմեղ մանուկներն առան այդ երգերը եւ տարան, հնչեցրին օտարացած, խորթացած տան չէմքից ներս, կրթըւած, բայց հայրենի սրտի զեղումներին կարօտ, ընտանեկան յարկին տակ։ Հայ քաղաքացին էլ, կոչցրածը գանելուն պէս, սեղմեց սրտին եւ դուրգուրալ սկսեց իր հարազատ երաժշտութիւնը։ Այն օրուանից կեանք առան ժողովրդական եղանակները, նոր ոգի ստացան եւ թարմ ուժով, բուռն թափով առաջ են գնում եւ աճում։

Երբ, դպրոցի միջոցաւ, գիւղական երաժշտութիւնն անցաւ գիւղից քաղաք եւ արմատ ձգեց, հայ գաւառներն էլ, բնականաբար, ժա-

(1) Կոմիտաս վարդապետի այս անտիպ և մեծապէս շահեկան ընդարձակ աշխատութեան, որու մէկ քանի գլուխները կը հրատարակենք, ֆրանսերէն տպագրութիւնը լոյս պիտի տեսնէ մօտաւոր ապագայի մը մէջ։ «Մնրքիւ Միգիքալ»ը արդէն մաս մը հրատարակեց վերջերս։

© National Library of Armenia

մանակի պահանջներին համաձայն, սկսան երգել, նուագել ու ստեղծել ժողովրդական գոյնով եւ ոճով։

Գուսաններ. — Հայ գուսաններն ունին, ժողովրդականից անկախ, ինքնուրոյն դպրոց։ Գուսանական դպրոցները երկու տեսակ են։ Առաջինին պատկանում են կրթուածները, երկրորդին՝ անուսումները։ Վերջինները մի կամուրջ են կապում բուն ժողովրդականի եւ կրթուած գուսանական դպրոցի մէջ։ Երգում են, օտար կամ մայրենի լեզուով, օտար եղանակներն անշնորհք, աղաւաղած, իսկ հայ չինական երգերը, թէպէտ բաւական ուղիղ, բայց թաթարական, ծոր ու մուռ, անկայուն եւ անճաշակ տառապաղութեամբ։

Այս ոգեղ արտասանութիւնը գործ է ածում, դժբաղդաբար, գիւղացի արական սեռն էլ, պատանական հասակից սկսած։ Իսկ իգական սեռը պահել է զուտ ազգային հնչումը։

Կրթուած գուսաններն աւանդաբար նախանձախնդիր են արաբ, պարսիկ եւ տաճիկ երաժշտութեան. թէպէտ, մէկ մէկ էլ, երգում են ժողովրդական եղանակներ. բայց աւելի զուարճացնելու, քան ճաշակ տալու նպատակով. որովհետեւ անարուեստ, թեթեւ, անոճ եւ իրանց դպրոցի ոգուն հակառակ են համարում։

Սոքա երգում ու նուագում են, վերջին ժամանակներս, աւելի հայերէն լեզուով, բայց արաբ, պարսիկ եւ տաճիկ գուսանական բանաստեղծութեան եւ երգագրութեան օրէնքներով։ Շատ անգամ, պատրաստի եղանակներին յարմարեցնում են նոր բառեր։ Այս դէպքում, օգուտ են քաղում տաճկական շարքիներից եւ թիւրքիներից, որովհետեւ արաբ եւ պարսիկ եղանակներ չեն լսում, յաճախներն էլ ծանր են եւ գուսանական, վիպական ոճին անյարմար։

Հասարակ եւ անուսում գուսանները գործածում են ժողովրդական եւ օտար, խառն, տաղաչափութիւն եւ եղանակ։ Այս կարգին են պատկանում եւ մի քանի պատահական երգիչներ, որոնք քաղաքայի կամ գիւղաքաղաքայի են։ Սոցա երգերը, մեծ մասով, զուտ անհատական բնաւորութիւն են կրում. ուստի մի կարճ ժամանակից յետոյ, անյայտանում՝ են։ Եղանակներն, առանց բացառութեան, օտար են։

Ժողովրդական երգի հեղինակը. — Հարցրէք գիւղացուն, թէ այս ինչ խաղը ո՞րտեղ է դուրս եկել. ուղիղ կամ սխալ, մի գիւղի անուն կ՝ասէ։ Հարցրէք, թէ ո՞վ է կապել, մասնայոյց կ՝ասէ գիւղի յայտնի խաղ ասողին։ Իսկ երբ սորան էք դիմում, կամ մի անուն է յիշում, կամ ուսը թափ տալի։ Հեղինակի անունը յայտնի է լինում այսպիսի երգերի մէջ. մէկին բորոնի յոշոտում, միւսը ջրասոյզ է լինում, մէկէլին բուք խեղդում, մի չորրորդին սպանում են, մի հինգերորդի ազգիկն են փախցնում, եւն։ Այսպիսի խաղեր յօրինում են գիւղի յայտնի խաղ ասողներն ու չրջիկ, հասարակ, անուս գուսանները, որոնք դէպքը նկարագրելուց յետոյ, վերջին տան մէջ էլ, յիշում են իրանց անունը։ (Այս ձեւն օտար է. ժողովուրդը գործ է ածում միայն նկարագրական երգերի համար։) Բայց, երբ անցնում է մի ժամանակ եւ հնանում է խաղը, մոռանում են, կամ մի ուրիշ հեղինակի հետ չփոթում, որովհետեւ ժողովրդի արտին մօտ է ամէն մի խաղ. նորան հետաքրքրում է երգն իր էութիւնով, աչ թէ հեղինակը, որ, այսօր ինքն է, վաղը՝ մի ուրիշը։ Երգաստեղծութեան չնորհը, գեղջուկի համար, մի բնատուր պարգեւ է. ամենքն էլ, լաւ կամ վատ, խաղ կապել եւ երգել գիտեն։ Նա սովորում է երգաստեղծութեան արուեստը հէնց բնութեան գրկում, որ նորա անգաւաճան դպրոցն է։

Քաղաքայի Հայերը ժողովրդական երգերին տալիս են «գիւղական, գեղջկական, չինական եւ ռամկական» անուններ եւ շատ իրաւացի. որովհետեւ երգ ստեղծողը, խաղ կապողը գիւղացին է. երգաստեղծութեան մէջ բաժին ունի իւրաքանչիւր գեղջուկ։

Ժողովուրդն ինչպէս է խաղ կապում, — Անցեալ 1905 թուին ամառանոց էի գնացել Հաւրնոյ վանքը (Շիրակում, Աղեքանդրոպոլից 28 վերստ հեռու, Արագածի վրայ)։ Վարգավառի տօնին, ուխտ էր եկել մեծ բազմութիւն։ Ուխտին գիւղացի աղջիկները, նորահարսներն ու տղաները, որպէս սովորոյթ է, պար են բռնում, խաղ կապում ու երգում։ Ախտա՛ս, որ այդ բնական, բանաստեղծական, բավանդակալից եւ գողտրիկ պարերին մեծ հարուած է աբելել եւ տալիս է այլանդակ, անճաշակ եւ կարծր

© National Library of Armenia

զուռնան։ Ուխտատեղին կորցրել է իր բուն նշանակութիւնը եւ դարձել է զուռնաչիների եւ առաւելապէս կեր ու խում վայր։ Ամեն մերձակայ եւ հեռու գիւղ բերում է իւր զուռնաչիների խումբը։ Երեւակայեցէք մի բակ. մի տասնեակ զուռնաչի, խումբ խումբ, այս ու այն անկիւնում, կամ բակի մէջտեղում, յաճախ իրար կից նուագելիս. խոնուած բազմութիւն, ասեղ ձգելու տեղ չը կայ. բարձր սարերից, խոր խոր ձորերից, տասնեակ զուռնայի բարձրաձայների արձագանքն է անդրադառնում. մի զարմուրելի, անլռելի, խմոռ ձայների անտանելի մխոր։ Փորձիր սենեակդ մտնել. դռները պինդ գոցիր, լայց զո՛ւր. զզուելի զուռնայի զզզոան ձայները պատիցն էլ են թափանցում։ Ուղիղ մէկ ու կէս օր մեր ականջներն ու նեարդերը յանձնեցինք նոցա բարեհաճ տրամադրութեան։ Վերջապէս, երկրորդ օրը, կէս օրից յետոյ, ամեն մէկն իր գիւղը քաշուեցաւ, իր գործի գլուխն անցաւ։

Երբ վանքն իր նախկին անվրդով խաղաղութիւնն ստացաւ, դատն բողոքեցի ընկերիս՝ Սրուանդ վարդապետին, իմ զայրոյթը յայտնեցի զուռնաչի երաժշտութեան դէմ եւ սասակիկ կոչեցի, որ բուն, անարատ, բանաստեղծական գեղջուկ երգերն անյայտանում են։

Հայը Սրուանդի եղբայրն իսկոյն գիւղ գընաց, ազգականների հարսներին, աղջիկներին հաւաքեց վանքի բակը։ Օրն երկուշաբթի էր եւ մեռելոց։ Ա՛յ, այժմ սկսեցինք հայրենի սրտալի երգեր լսել եւ հարազատ ուխտ անել։ Ես, արդէն թուղթն ու մատիտը պատրաստ, դուրս էի նկել չնութեան ապայատակ տանիքը, եւ ըսպասում էի նոցա գալուն։ Այս անգամ, ներկայ էի հէնց սկզբից. ուրիշ անգամներին հնար չէր լինում. որովհետեւ պար բռնելն սկսում են զիշերով, իսկ ես հասնում էի եւ պատրաստ երգեր էի լսում։ Տեսայ եւ զգացի. թէ որքա՞ն սխալուել եմ։

Առաջ առաջ, մէ չորս հոգի եկաւ։ Պարը բոլորեցին։ Մի երկու շրջան, լուռ, բաց համաչափ քայլով, դէսլի աջ, որպէս սովորոյթ է խաղի սկզբին, պատյտ արին։ Մէջի լաւ խաղ ասողն սկսեց երգել այս կրկնակով

Ամաճ թելլո, թելլո,
Միրուճ թելլո, թելլո (1)։

խումբն այս կրկնեց նոյնութեամբ եւ պարագլուխը չարունակեց երգի առաջին մասը եւ կրկնակի առաջին տողը. խումբը կրկնեց նոյնը. պարագլուխը չարունակեց երգի երկրորդ մասն ու կրկնակի երկրորդ տողը՝ փոքրիկ աւելացրութիւնով։ Ոգեւորութեան ազդեցութեան տակ, կամաց կամաց, եղանակը զարգացաւ եւ ձեւափոխութիւններ ստացաւ. վերջին ձեւերին փոխուեցաւ տաղաչափութեան կշիռը, որովհետեւ թռնում էին արագ։ Ութերորդ ձեւը երգելիս եկաւ մի երկրորդ խումբ, որ պարի մէջ մտաւ՝ հէնց երգի ընթացքում։ Նոր պարագլուխ անցաւ պարի գլխին։ Պարագլուխ լինում են յայտնի խաղ ասող եւ ձայնեղ աղջիկներ կամ տղայք. երբ գալիս է մի այդպիսին, նախկինը պարի զեկը տալիս է նորան եւ ինքը կանգնում ձախ կողմից։ Երկրորդ պարագլուխը փոխեց եղանակը՝ մի ասաիման բարձր բռնեց առաջին մասը. այստեղ միացան էլի մի քանի ուրիշ հարսներ եւ աղջիկներ. պարագլուխը նորից փոխուեցաւ։ Սա էլ, աւելի բարձր երգեց, յանկարծ սկսան կանչել ու քաշքշել մի աղջկան, որ հեռու կանգնած դիտում էր, տարան եւ պարի գլուխ կանգնեցրին. խաղը մի առտամանակ ընդհատեցին, մինչեւ որ այդ աղջիկն էլ մտաւ պարի մէջ։ Սա գիւղի յայտնի երգչուհին եւ պարուհին էր։ Սովորոյթի համաձայն, այսպիսին չեմ ու չեմով է գալի, թէեւ սիրտը եռում է երգել պարելու համար։

Պարը հասաւ ոգեւորութեան գագաթին։ Պարագլուխն իր սքանչելի ձայնով ոլորեց եղանակը եւ, նոր ոգի ներշնչելով, երգին համ ու գոյն տուաւ։

Յաջորդ երգերն այս խաղի հինգաձեւի աշդեցութեան էին. քանի եղանակը փոխուեցաւ, այնքան հեռացան։

... Այն օր գրի առայ 34 նոր երգ։

Այսքանը բաւական է պարզելու համար, թէ ինչպէ՛ս են ծնունդ առնում գեղջուկ երգերը եւ, թէ ինչպէ՛ս, տե՛ղն ու տեղը, բազմապատիկ աճում ու զարգանում են։

Պարը վերջացաւ։ Խնդրեցի, բոլորն էլ եր-

(1) Կը ցաւինք որ մեր ընթերցողներուն պակասը մեզ կը ստիպէ այս ուսումնասիրութեան ընկերացող երաժշտական օրինակները մեկդի թողուլ։

© National Library of Armenia

գեցին առաջին խաղը, բայց վերջին պարապմունքի եղանակով։ Երբ ինքս արծարծեցի եւ յիշեցնել կամեցայ իւրաքանչիւր նախկին պարապմունքի եղածը, ամենեւին կարեւորութիւն չը առին սեփական ստեղծագործութեան, քանի որ գիւղի առաջին երգչուհին, իր ոլորուն ձախով ու բնատուր ձիրքով, գեղարուեստական ամփոփ արտայայտութիւն էր տուել բոլորի թոթովանքին, առտրկեցին, թէ «էդոնք լաւը չեն»։ Մինչեւ անգամ զարմանում էին. որ մի «խաղ ասող վարդապետ» չնչին բանների յետեւիցն է ընկել։ Երգ է, խաղ է, ասացին ու գնաց։ Էլ ո՞ւմ վէճն էր թէ ո՞վ, ո՞ւր, ե՞րբ եւ ի՞նչպէս է երգել։

Գիւղում, ամենքն էլ, լաւ կամ վատ՝ երգել գիտեն. որովհետեւ մանակից են երգաստեղծութեան կամ երգասութեան։ Բայց եւ ո՛չ մէկը գիտէ, թէ ով է կապել խաղը, որովհետեւ բոլորը միասին են հիւսում։ Ո՛չ մէկը գիտէ, թէ որտեղ է հիւսել, որովհետեւ խաղ ստեղծել կարելի է ամեն տեղ։ Ո՛չ մէկը գիտէ թէ ինչպէս է յօրինել, որովհետեւ երգաստեղծութիւնն ինքնաբեր կարողութիւն է։ Ո՛չ մէկը գիտէ, թէ երբ է հնարել, որովհետեւ իւրաքանչիւր բոլոր հետք բերում է նոր տրամադրութիւն։ Մէկն առիթ է տալի, միւսը՝ նիւթ, մէկը մի միտք է յղանում միւսը ձեւակերպում է եւ, տեղն ու տեղը, վայրկենական տպաւորութեան եւ ազդեցութեան տակ, խօսքն ու ձայնը, բանաստեղծութիւնն ու երաժշտութիւնը, իր երկուորեակ քոյրեր, բղխում են անապատ կերպով ժողովրդի մտքից ու սրտից, բնազդաբար եւ առանց կանխակալ նախապատրաստութիւն ունենալու։ Իրանց միջի նուրբ ճաշակի տէր անձն էլ կոկում է բնականաբար, տեղաւորելով գրչի դնում եւ գեղջուկի բուն տպին՝ վառ գոյներով պայծառացնում։ Արդէն յետոյ, իրր փաստաբուել, պատրաստի երգ, իրենք էլ չգիտեն, թէ ով կամ երբ է ստեղծել, ուր կամ ինչպէս է ծնունդ է առել։

Ա.Ցիտոի հրապարակումը. — Մէկ օր էլ, նոյն թուին, Հաղբատ վանքին կից փոքրիկ մի աղջկուրի երգի ձայն լսեցի։ Դուրս թռայ, ելայ կտուր։ Դիմացը, տանիքի վրայ նստած է մի չափահաս աղջիկ, աթոռ է չինում ու երգում։ Հազիւ արտասանել էր վերջին վանկը, եկաւ մի աղջիկ խօսքի բռնուեցան։ Մէ քանի բոպէ յետոյ, եկոյր գնաց, իսկ նա չարունակեց։ Ցանկալի, մի պառաւ բարկացած պառաւ եւ ցած կանչեց աղջկան։ Անմիջապէս վեր ելաւ տեղից ու տուն իջաւ։

Անիծեցի պառաւին, որ խանգարեց։ Այնուհետեւ ականջս դուրն էր, բայց էլ երգի ձայն չը լսեցի։

Երգի բովանդակութիւնից երեւում էր աղջկայ հոգեկան վիճակը։ Չափահաս աղջիկ, ուրիշի տանը, մի կտոր հացի համար կաշկանդուած, գործի ժամին, մենակ նստած, յիշում է մօրը, որից, ինչպէս ասացին, զրկուել էր փոքրուց, զգում է որբի դառն վիճակը եւ, բնական բերմունքով, թախծալի վիշտն է արտայայտում կցկտուր երգ ասելով, որ իր հոգու պատկերն էր։

Եթէ այս երգը լսէին, նորա պէս, ուրիշ որբ աղջիկներ, անշուշտ պէտք է խօսէր ե՛ւ նոցա սրտի խորքից։ Նոքա էլ իրենց ցաւի չափով, պէտք է ձայնակցէին եւ կարեկցէին։

Կ՚անցնէր մի ժամանակ, կամ կը մոռանայ ին եւ կամ կը մնար մի աղօտ յիշողութիւն։ Որովհետեւ գիւղացու համար երգաստեղծութիւնն էլ մի այնպիսի սովորական եւ բնական գործողութիւն է, որպիսին, մեզ համար, առօրեայ խօսակցութիւնն է։ Եթէ չը գրենք այսրուան ասածը, կամ հոգ չը տանենք մտքում պահելու, յետոյ, կամ չենք յիշի, կամ՝ շատ շատ բովանդակութիւնը կը մնայ։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

(Մնացածը յաջորդ թիւով)

Պիտի չապրիս

Պիտի չապրիս։ — Բուռը՝ սիրոյ երգերով
Որբելու տեղ քեզ ծոցիս վրայ
Գերեզմանին պիտ՚յանձնեմ.
Չինչ կապայտին դեռ այդ այքերդ ընայած

© National Library of Armenia